

Կը լեցուին . անոնց տեղ հարիւրաւոր ուրիշ պարկեր կը յաջորդեն և այսպէս հետզիետէ : բազմութեան տեղատութիւն ու մակընթացութիւն մ'է , ոմանք կը փութան համնելու , այլք բեռներնին վրանին՝ աճապարանգք փախչիլ կը յանան . Նաւակներուն տախտակէ կամուրջ ները շատ նեղ ըլլալով ու չիկարենալով միանգամայն եկողներուն ու դարձող ներուն ծառայել , յուսահատական կը ռիւներու թէատրոն կ'ըլլան : Զիրար կը հրմշտըկեն , կը կոխկըռտեն . ձեռքէ ձեռք պարկերը կը յափշտակեն , որոնք կը բացուին կամ կը պատոին՝ տանիլ կամ հոն բռնել ուղղողներուն ջանքէն . միջերնին եղած ցորենը կը թափի . հոն այն երկրին մէջ՝ ուր ցորենի նուազութիւն կայ , աղքատին ու հարուստին պարէնը առուակի նման ջուրերուն մէջ կը թափթթվի . և որ աւելի զարհուրելի է , այս շփոթութեանց մէջ երկու կանայք ջուրը կ'իյնան , և ամբոխն աւարառութեան զբաղած՝ անոնց իյնալուն ամենսին փոյժ չըներ . ամեն մարդ իր բանին հետ ըլլալով՝ ոչ ոք անոնց օգնութեան կը համնի : Այսպէս մարդկային կիրքերն երբ ամենայն կապ կը խզեն՝ մարդկութեան ամենաբնական զգացմունքներն ալ կը խղզեն :

Սակայն դեռ այս ամենը սոսկալի ու վայրագ տեսարաններու նախերգանքն էին :

Այնչափ բազմաթիւ բազուկներու անընդհատ գործունէութեամբն նաւակներուն կողոպուտը շուտ մը լմընցաւ . բայց իրենց կէս բեռնաւորեալ ցորենը չէր կրնար բաւել այն ամբոխին՝ որ աւարին յաջողութեամբն և ևս կ'աճէր . վասն զի ոմանց վաճառանոցէն առած առաջին պարկերը տեսնելով այլք՝ որոնք առ երկիւղի կամ ակնածութեան առաւտանց ետ կեցեր էին , սիրտ առին . և եթէ նաև այնչափ ցորենէն ամենուն բաժինն ելած ըլլար , բաւական չէր այնպիսի խուռան ամբոխի համար , որ սովոր վախով այնչափ երկար ժամանակէ ՚ի վեր լոելեայն կիրքեր մնուցեր էր սրտին մէջ . ևս առաւել հիմա որ ա-

մենայն գազանութեամբ այս կիրքերը պոռթկացեր էին՝ երբյաղթութեամբ կը հարբենային ու ալ աւելի կը կատղէին : Խառնաղանջը զեռ այնչափ առաջ չէր գացած՝ որ ըրած զեղծմանցը վրայ ամընայ :

Ութէ

Կը շարունակո՞ի :

ԸՆԾԱՅ ՏԱԼՈՒ ԱՐՀԵՍՏԸ

Մէկ ընծայ մը իրաւցընէ ընտիր ըսուելու համար , ընդունողին կողմանէ պէտք չէ ուրիշ մահացուցմունք պատճառէ , բաց անկէ որ հաւասարը ընելու անկարութենէն առաջ կու գայ : Այս ընծայ պէտք է օգտակար , գեղեցիկ , արժէք ունեցող ու հազուագիւտ բան մը ըլլայ : Սակայն ընդհանրապէս բարի ճաշակը կը պահանջէ որ ընծայ շատ մեծ արժէքի բան մը չըլլայ : Սակայն հազուագիւտ ըլլալը զիսաւոր յարգն է , վասն զի ճոխութենէն վեր է և նուիրին աւելի յարգ մը կու տայ : — Եթէ հարուստ ես , լաւ է , ընդհանրապէս , որ ըրած ընծայդ ճոխ ըլլայ , որ է ըսել հարստութեանդ համապատասխանէ . վասն զի ասոր հակառակը ըլլալով հարստութիւնը բարեկամութենէ ու վեհանձնութենէ վեր դասած կ'ըլլաս . որ մեծ վրիպակ է : — Հաւասարից մէջ պէտք չէ անանկ ընծայ ընել՝ որ ճոխութեանց հաւասարութենէ վեր ըլլայ . վասն զի ասանկ չընելով աւելի մահացուցմունք պատճառելու վտանգ կ'ըլլայ քան թէ հաճոյք , գոնէ կարճամիտ մարդոց . և վեհանձնութիւն ալ չէ այս կերպ մարդիկներէն գերազանցել ու զենալ : Սակայն ճոխ մարդ մը կրնայ անանկ արժէքի ընծայ մը ընել՝ որ կարելի չըլլայ իրեն փոխարինել . բաւական է որ ընդունողը իրմէն նուազ վեհանձն ու խելացի չըլլայ , ու վտանգ չըլլայ գարձեալ այն բանը իրեն նախատինք սեպելու : Ուրիշ կողմանէ աղքատ մարդ մը որ վեհանձն սիրտ ունի , և կը զգայ որ ըրածը վեհանձնութենէ է ,

կրնայ ամենազքատին ընծայ մը ընել
և անոր վրայ մեծ յարդ մը կապել.
վասն զի սրտանց ու դիտմամբ կ'ընէ.
և ասանկ չնշին ընծայ մը տալու հա-
մարձակելով, կը ցուցընէ որ իր սիրտը
շատ վեր է քան իր ճոխութիւնը. և ա-
նանկ որ ինչ և իցէ ընծայ յարգելի կ'ը-
նէ: Բայց վայ եթէ ընծային հետ պա-
հանջողական կերպ մը ցուցընէ: Պէտք
չէ ստեղով զուրցէ որ լաւագոյնը գըտ-
նելու կրցած չէ. և ոչ ալ ձեացընէ որ
ընծայն արժէքէն ամելի կը յարգէ. և
ոչ — որ յոռեգոյն է — հարցընել թէ
ախորժելի է, օգտակար կրնայ ըլ-
լալ, և այլն:

Լաւագոյն է երբեք չտալ քան թէ
կրցածէն պակաս տալ:

Շնորհքով ընծայ մը ընդունի՝ տուո-
ղին դիտաւորութիւնը ուղիղ դատելով,
այնչափ կ'արժէ՝ որչափ թէ փոխարի-
նած ըլլայիր:

Պէտք չէ մեղի անծանօթ եղած մար-
դիկներու ընծայ զրկենք, բաւական է
որ զուրկ չըլլան ինչ և իցէ կարեսորու-
թենէ՝ ինչուան որ ստոյգ չզիտնանք մեր
ընծայելու պատճառ և առիթ ունենա-
լը, և թէ մեր ընծայն ախորժելի պի-
տոր անցնի. վասն զի հակառակը ընե-
լրիմանհամեստութեան և կոպտութեան
նշան մը կ'ըլլայ: Իրաւ է որ ընկերու-
թեան մէկ քանի դասերու մարդիկ այն
չափ ուշադրութիւն չեն դներ այս կա-
նոնիս, և տղայամիտ ու դիւրաբորբով
բնաւորութիւններ, անդէտ աշխարհիս
ակնածութեանց, շատ անգամ այսպի-
սի ընծայներ ընելու կը բերին. սակայն
այս ստոյգ է որ ասոր մէջ անձնասի-
րութիւնն է զլսաւորապէս որ կը գոր-
ծէ: Այս կանոնէս կրնան բացառու-
թիւն մը ըլլալ այն մեծ ու հազուա-
գիւտ հանճարներուն՝ որ իրենք իրենց
անձին օրէնք կրնան ըլլալ, ու կը պա-
տուեն զայն՝ որ յիշելու արժանի կը
սեպեն:

ՄԱՆՐԱՎԵՊ ՄԸ

Թիւրէն՝ իր բանակին մէջ պարկեշտ
բայց աղքատ սպայ մը տեսած ըլլալով
որ գէշ ձի մը ունէր, սեղանը հրաւի-
րեց զինքը, ու կերակրէն ետքը առան-
ձին տեղ մը աղնուութեամբ սրտի այս
ըսաւ իրեն. « Քեզի մէկ աղաշանք մը
ունիմ ընելու՝ որ քիչ մը համարձակ
երենայ պիտի, բայց կը յուսամ որ գօ-
րավարիդ չուզենաս պիտի բան մը մըխ-
տել: Ես ծեր ու հիւանդոտ եմ, շատ
աշխոյժ ձիերը անհանգստութիւն ու
տառապանք կու տան ինծի. դուն մէկ
մը ունիս՝ որուն վրայ ամենահանգիստ
կրնամ նստիլ. եթէ վախ չունենայի որ
խնդիրքովս քեզի մեծ զոհ մը ընել կու
տամ, կ'ուզէի աղաշել որ ինծի չնոր-
հէիր քուկինդ: Ապայն ուրիշ պատաս-
խան չտուաւ եթէ ոչ խորին յարգու-
թիւն մը ընելով, գնաց շուտ մը ձին
առաւ ու թիւրէնի ախոռը տարաւ:
Այս զօրավարը երկրորդ օրը՝ բանակին
ամենէն ընտիր ու գեղեցիկ ձիերէն մէ-
կը անոր զրկեց:

ՀԻՆԳ ՇԱԲԱԹ ՕԴԱՊԱՐԿԻ ՄԷՋ

ՃԱՆՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԵՐԻՑ ԱՆԳԱԽԱՑԻՈՑ
ՅԱՓՐԻԿԵ

(ՏԵՍ ԵՐԵՍ 148)

ԳԼՈՒԽ Ժ.

Յառաջնրաց փորձեր. — Տոքորին հինգ արկ-
դերը. — կազի բոցարձարծը. — Զերմա-
տարը. — կառավարելու կերպը. — Մտոյդ
յաջողուրիւն:

« Շատ անգամ, պարոնայք, այլ և
այլ մարդիկ փորձ փորձած են ըստ
կամն վեր ելել կամ վար իջնել, առանց
օպապարկի մը կազը կամ նաւախիճը
կորսնցընելու: Գաղղիացի օդանաւորդ
մը, Պարոն Մօէնիէ, օդը ներքին ընդու-
նարանի մը մէջ ճնշելով, կ'ուզէր այդ